

Կարգ

Ապահովագրված անձանց՝ մինչև պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում հաշվառվելն ընկած ժամանակահատվածում ձեռք բերած ապահովագրական (աշխատանքային) ստաժի հաշվարկման ձեւաթուղթը լրացնելու

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են ապահովագրված անձանց՝ մինչև պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում իրենց հաշվառվելն ընկած ժամանակահատվածում ձեռք բերած ապահովագրական (աշխատանքային) ստաժի մասին տվյալների ձեւաթղթի լրացման կանոնները:

II. Ձեւաթուղթը լրացնելու կանոնները

Ձեւաթղթի՝

1. "Ձեւաթուղթը լրացնող ապահովագրի ՉՎՀՀ" սյունակում լրացվում է ապահովագրի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:
2. "Ձեւաթուղթը լրացնող ապահովագրի անվանումը" սյունակում լրացվում է ապահովագրի անվանումը:
3. "Յ/հ" սյունակում լրացվում են հերթական համարները:
4. "Ապահովագրված անձի" հատվածի "ազգանունը", "անունը", "հայրանունը", "սոցիալական քարտի համարը" սյունակներում լրացվում են ապահովագրված անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ սոցիալական ապահովության քարտի համարը:
5. "Կազմակերպության անվանումը" սյունակում հերթականությամբ լրացվում են այն կազմակերպությունների անվանումները, որտեղ աշխատել է ապահովագրված անձը, կամ այլ գործունեության անվանումը, որով զբաղվել է ապահովագրված անձը:
6. "Աշխատանքային գործունեության" հատվածի "սկիզբը" սյունակում լրացվում են տվյալ կազմակերպությունում աշխատանքի ընդունվելու օրը, ամիսը, տարեթիվը, իսկ "ավարտը" սյունակում լրացվում են տվյալ կազմակերպությունում աշխատանքից ազատվելու օրը, ամիսը, տարեթիվը:
7. "Արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային գործունեության տեսակները՝ ըստ Ցուցակների եւ ցանկի" հատվածի՝
 - ա) "Ծածկագիրը" սյունակում լրացվում է համապատասխան ցանկի ծածկագիրը՝
 - "01" - թիվ 1 Ցուցակ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1987-Ն որոշում),
 - "02" - թիվ 2 Ցուցակ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1987-Ն որոշում),
 - "03" - ցանկ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշում),
 - բ) "մասնագիտությունը եւ (կամ) պաշտոնը" սյունակում լրացվում է ապահովագրված անձի զբաղեցրած պաշտոնի եւ (կամ) մասնագիտության անվանումը, որն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1987-Ն կամ 2003 թվականի մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշումներով հաստատված ցանկերում,
 - գ) "սկիզբը" սյունակում լրացվում են տվյալ կազմակերպությունում թիվ 1 կամ թիվ 2 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի կամ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններով, պաշտոններում աշխատանքային գործունեության սկզբի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը,
 - դ) "ավարտը" սյունակում լրացվում են տվյալ կազմակերպությունում թիվ 1 կամ թիվ 2 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի կամ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններով, պաշտոններում աշխատանքային գործունեության ավարտի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
8. "Ապահովագրված անձ" տողում լրացվում են ապահովագրված անձի անունը եւ ազգանունը ու ստորագրվում է ապահովագրված անձի կողմից:
9. "Ղեկավար" տողում լրացվում են ձեւաթուղթը լրացրած կազմակերպության ղեկավարի պաշտոնի անվանումը, անունը, ազգանունը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի պարագայում լրացվում են անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը:
Ձեւաթուղթը ստորագրում է ձեւաթուղթը լրացրած կազմակերպության ղեկավարը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի պարագայում՝ անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, եւ տվյալների իսկությունը վավերացվում է կնիքի դրոշմամբ:
10. "Ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը" տողում դրվում են ձեւաթուղթը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը: